

ՄԻԶԱՉԳԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

**ԼՂՅ «ԱԶԱՏԱԳՐՎԱԾ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ» ԵՎ «ԿԱՐԳԱՎԻճԱԿԻ» ՔՆՆՈՒՅԹԸ
ԱԴՐԵՋԱՆԱ-ԴԱՐԱԲԱԴՅԱՆ ԴԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ
ԲԱՆԱԿՑԱՅԻՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ /1995թ./***

ՆԵՐԻ Բաղդասարյան

Բանալի բառեր՝ Լեռնային Ղարաբաղ, ԼՂՅ, ազատագրված տարածքներ, կարգավիճակ, Եռակողմ պայմանավորվածություններ, հակամարտող կողմ, Շուշի, Լաշինի միջանցք, ՅՅ, Աղրբեջան, աղրբեջանա-դարաբաղյան հակամարտություն, բանակցային գործընթաց:

1992-1994 թթ. ԵԱՀԽ Մինսկի գործընթացին հաջորդեց նոր փուլ, 1995 թ. հունվարին ձևավորվեց ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահությունը, որը ներկայացնում էին Ռուսաստանը և Հվետիան: 1995 թ. ապրիլին համանախագահության ինստիտուտում Հվետիային փոխարինեց Ֆինլանդիան [1]: ԵԱՀԽ Բուլապեշտի գագաթնաժողովում 1994 թ. հաստատվել էր, որ հակամարտող կողմերի համար կարգավորման հիմնական հարցը ԼՂՅ կազմավիճակի խմբիրն էր: Ըստ էրթյան՝ 1995 թ. գործընթացները տրամարանական շարունակությունն էին ԵԱՀԽ Բուլապեշտի 1994 թ. դեկտեմբերի 5-6-ի գագաթնաժողովի, որի վերջնարդյունքը կարգավիճակի, խաղաղության պահպանման և մարդասիրական ուղղվածության հարցեր էին[2]: Այս հարցի կարգավորումից հետո ԵԱՀԿ ՄԽ համանախագահները պետք է ամրագրեին մյուս ածանցյալ խնդիրները [3]: Գագաթնաժողովում հղում էր արվում 1994 թ. մայիսի 12-ին Ռուսաստանի ջանքերի շնորհիվ հակամարտության կողմերի միջև կրակի դադարեցման պայմանավորվածությանը: Իրականում 1994 թ. Եռակողմ համաձայնագրից հետո աղրբեջանա-դարաբաղյան հակամարտության կողմերը պետք է ծեռնպահ մնային ռազմական գործողություններից, բայց աղրբեջական կողմն, այնուամենայնիվ, ռազմածակատի հյուսիսային՝ Մարտակերտի և հարավ-արևելյան՝ Յաղորություններով շարունակում էր խախտել հրադադարի պայմանավորվածությունը՝ մասնավորապես շարունակելով նաև սպառազինության կուտակումները[4]: Յաղադարի վերահսկման մեխանիզմների խախտումները աղրբեջանական կողմից առաջ էին բերել հայկական կողմի դժգոհությունը ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահությանն ուղղված 1995 թ. մարտի 3-ի և մարտի 14-ի գրեթե նույնարուվանդակ նամակներում, որտեղ մատնանշվել էր աղրբեջանական կողմի 1995 թ. հունվարի 21-ի, փետրվարի 11-ի և մարտի 3-ի ներթափանցումները[5]:

Յաղադարի մասին պայմանավորվածություններն ամրապնդելու և կարգավորման գործընթացը շարունակելու ուղղությամբ ԵԱՀԿ Մինսկի խումբը շարունակում էր աշխատանքը կողմերի հետ: Յատկանշական է, որ Բուլապեշտյան գագաթնաժողովում ամրագրվել էր հակամարտող կողմերի կարգավիճակը:

1995 թ. հունվարի 12-ին Վիեննայում սկսվել էր ԵԱՀԿ Մինսկի խմբի 9 երկրների հերթական հանդիպումը առանց Լեռնային Ղարաբաղի Յանրապետության, ՅՅ և Աղրբեջանի Յանրապետության ներկայացուցիչների[6]: Յատկանշական է, որ նման հանդիպումները նպատակ ունեին բանակցային տարածք /«negotiating space»/ ապահովելու,

* Յոդվածն ընդունվել է 12.02.19:

Յոդվածը տպագրության է երաշխավորել խնբագրական խորհրդի անդամ պ.գ.թ., դոցենտ Վ. Պետրոսյանը:

ՄԵԽԱԿԱՆ ԱՎԱՐԱՐՈՒՄԻ ԼՐԱՏՈՒ 2019

Հնայած հրադադարի պայմանավորվածությունը ձեռք էր բերվել, բայց դրանից բխող հարցերում կողմերի միջև տեսակետների խորը անհամադրություն կար:

ԵԱՀԿ Մինսկի կոնֆերանսի համանախագության/ Միջնորդներ/ 1995 թ. փետրվարի 3-ին կողմերին ուղղված առաջարկում մասնավորապես ընդգծվում էր ստանձնել եռակողմ պարտավորություն կրակի ռեժիմի դադարեցման ամրապնդման հետ կապված:

Պարտավորությունների 10 կետերն ներկայացնում են զսպման մեխանիզմներ, որոնք ուղղված կլինեն հրադադարի ռեժիմի ամրապնդմանը, մասնավորապես կողմերի գործողությունների փոխադարձ զապում և հակակշռում, վստահության մեխանիզմների ամրապնդում, կողմերի միջև անմիջական, դրան զուգահեռ նաև միջնորդավորված կապի առկայություն: Կողմերը պարտավորվում են ձեռնպահ մնալ հրապարակային հայտարարություններից, որոնք կարող են հանգեցնել կոնֆլիկտի լարվածության աճին:

Փետրվարի 4-ին ընդունվեցին պատասխան նամակները Յայաստանի պաշտպանության նախարար Ս. Սարգսյանից և Լեռնային Ղարաբաղի քանակի հրամանատար Ս. Քարայանից, Աղրթեցանի պաշտպանության նախարար Ս. Մամեդովից, որտեղ հաստատվում էր կողմերի համաձայնությունը ստանձնելու պարտավորությունները և այն 1995 թ. փետրվարի 6-ից ուժի մեջ մտնելու փաստը[7]:

Բանակցային գործընթացում կողմերի դիրքորոշմամբ պայմանավորված ԵԱՀԿ Մինսկի խմբի գործելակերան ուղղված էր առաջին հերթին խուսափելու փակուղային իրավիճակներից, մեղմելու առանձքային հարցերում կողմերի խիստ քւերացված կարծիքները: Բացի առկա եռակողմ համաձայնագրերից ԵԱՀԿ Մինսկի խումբը առավել առարկայական նախագծերում մեծ ուշադրություն էր դարձնում կողմերի միջև խաղաղության ամրապնդմանը և ապառազմականացմանը վերաբերող հարցերին: Ներկայացված նախագծում կենտրոնականը կարգավիճակի խնդիրն էր, որը պետք է երկու կողմերի համար փոխգիծության տարրերակով լուծվեր:

ԵԱՀԿ Մինսկի խմբի կողմից նշակված նախագծում վիճելի հարցերի թվում էր ազատագրված տարածքներ Շուշիի և Լաշինի հարցը: Սյուս հարցերը մարդասիրական բնույթ ունեին՝ պատանդմերի փոխանակում, պատերազմի գերիների, սպանվածների մարմինների վերադարձի հարց: ԵԱՀԿ նախագծի երկրորդ մասը հիմնականում վերաբերում էր ապառազմականացման խնդիրներին: Ետ էն քաշվելու ռազմական բոլոր ուժերը՝ իրենց հետ տանելով ծանր զենքերը՝ այդ թվում հրասայլերը, հրթիռները և հրետանային համակարգերը, դրանք հրադացվելու են 20 կմ, ականանետները 10 կմ, թերև զինված ջոկատները 5-10 կմ: Քննարկվում էր այն հարցը, թե սահմանային ո՞ր գիծը պետք է ընդունել որպես ելման դրություն ետքաշման համար: Ետքաշման ընթացքում հակամարտ կողմերի գործերը պետք է պարտավորվեն ականազերծել իրենց կողմից ականապատված տարածքները և ԵԱՀԿ-ին համձնեն ականապատված գոտիների քարտեզները:

Նախագծի հիմնական համաձայնություններից զատ պետք է հաստատվեր բնական կյանքին վերադառնալու ժամանակացույցը: Ուզանական գործողություններն ավարտելուց հետո 10 օրվա ընթացքում պետք է սկսվեմ էլեկտրացանցի, 14 օրվա ընթացքում ճանապարհների վերականգնման աշխատամքները: Նախատեսվում էր 12 օրվա ընթացքում վերաբացել Ղազախ-Իջևան-Նախիջևան գազատարը: Երեք շաբաթվա ընթացքում պետք է վերականգնվեր երկարուղու աշխատանքը: Պետք է սկսվեր Ղայաստան-Աղրթեցան երկողմ երթևեկությունը, բացին Ղազախ-Իջևան և Աղդամ-Ստեփանակերտ-Լաշին-Գորիս-Նախիջևան մայրուղիները: ՄԱԿ-ի համապատասխան որոշումից հետո տարածաշրջան էին բերվելու խաղաղապահ բազմազգ ուժերը:

ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահներ Շվեիհան և Ռուսաստանը առաջարկում էին, որ խաղաղապահ գործողությունների տևողությունը կախված լինի տարածաշրջանում զարգացող հրադարձություններից և հակամարտության քաղաքական լուծման ընթացքից, ուստի նախատեսում էին խաղաղապահ ուժերին սկզբում տալ 6 ամսվա

ՄԵՐՐՈԴ ՄԱՆՈՒՅԹ ՀԱՍԱՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2019

մանդատ: ԵԱՀԿ-ն հայկական և աղբբեջանական կողմերին կոչ էր անում բոյկոտի չենթարկել բանակցությունները, հորդորում էր գերծ մնալ մեկը մյուսի դեմ թշնամական քարոզություննից[8]:

1995թ. մարտ 3-ին Պրահայում բացվեց Յամանախագահության Ղեկավարող խորհրդի առաջին հանդիպումը գործող նախագահ Լավլո Կովաչի կողմից : ԵԱՀԿ գործող նախագահն իր ամփոփագրում առկա նկատառումներում տարածաշրջանի իրադրության մասին ընդգծել էր, որ ԵԱՀԿ անդամ պետությունները նախկինի պես բախվում են իրողությունների հետ, որոնք սպառնալիքի տակ են դնում ԵԱՀԿ սկզբունքները, այդ թվում և այնպիսիք, ինչպիսիք են տարածքային ամրողականության պահպանումը, ինչպես նաև նարդու իրավունքների և ազատությունների պաշտպանությունը: Պատվիրակությունները անհանգստություն էին հայտնել Լեռնային Ղարաբաղի հակամարտության «ոչ պատերազմ, ոչ խաղաղություն» ընթացքի արիթով և ընդգծել իրենց ջանքերի կարևորությունը կրակի դադարեցման համաձայնության ամրապնդմանը: Նրանք հիասթափություն էին հայտնել նշված հակամարտության բանակցություններում առաջնարարի բացակայության առումով:

Ինչ վերաբերում էր կարգավիճակի խնդրին, ապա գործող նախագահը հաստատել էր նախկինում ԵԱՀԿ կողմից ընդունված որոշումները կողմերի կարգավիճակի մասին, այսինքն հակամարտության մեջ ներգրավված երկու պետությունների, ինչպես նաև կոնֆլիկտի երրորդ կողմի/ Լեռնային Ղարաբաղի/ բանակցությունների բոլոր գործընթացներին մասնակցությունը, ներառյալ Մինսկի խորհրդաժողովին : Բացի դրանից՝ հետաքրքրված կողմերը կարող էին հրավիրվել Մինսկի խորհրդաժողովին և դրա նախապատրաստական միջոցառումներին խորհրդատվությունների անցկացմանը [9]:

Պատվիրակությունները դիմել էին կողմերին՝ պնդելով քարմացնել քաղաքական բանակցությունները՝ առանց նախապայմանների:

Կողմերին կոչ էր արվել արձագանքել դիմումին, որը վերաբերում էր ռազմագերիների և պատանեմերի ազատնամբ: Ստահոգություն կար, որ դա անհապաղ չանելու դեպքում, այն դրական ազդակը, որը ստացվել է Բուլղակեշտի որոշումից հետո, կարող է կորչել: Միաժամանակ անհրաժեշտ էր համարվել ուժեղացնել խաղաղության պահպանման օպերացիայի նախապատրաստումը, որպեսզի պայմաններ ստեղծվեին ԵԱՀԿ համար հանգուցային որոշումներ կայացնելու: Գործող նախագահը կոչ էր արել պետություն-անդամներին ծերնարկելու կոնկրետ քայլեր անձնակազմի առանձնացման, դրամական միջոցների հատկացման համար՝ ապահովելու օպերացիայի ֆինանսավորումը[10]:

Պրահյան գործընթացը կարևորվում է նրանով, որ հայտարարության ձևով ընդունվել էր մի որոշում, որտեղ համանախագահողմները վերահստատել էին իրենց դիրքորոշումը, որն է՝ հակամարտության մեջ կա երեք կողմ՝ Աղրբեջանը, Լեռնային Ղարաբաղը և Յայսատանը : Քննարկման էր դրվել հակամարտության դադարեցման քաղաքական համաձայնագիրը և մասնակիցները կարողացել էին մի քանի կարևոր հարցերի շուրջ համաձայնության գալ, որոնք վերաբերում էին հենց համաձայնագրի տեքստին: Այս փուլի յուրահատկությունն այն էր, որ կենտրոնական հարցը Լեռնային Ղարաբաղի կարգավիճակի խնդրին էր:

1995թ. ապրիլի 6-7-ին Ստոկհոլմում կայացած հերթական հանդիպմանը մասնակցող ԵԱՀԿ Մինսկի խմբի անդամ պետությունների պատվիրակությունները գնահատական էին համարել, որ տվել Լեռնային Ղարաբաղի հակամարտությանը հաշվի առնելով տարածաշրջանում տիրող հրավիճակը և բանակցային գործընթացի վիճակը՝ անհրաժեշտ էին համարել, որ բոլոր շահագրգիռ կողմերը հատուկ ուշադրություն դարձնեն ռազմական գործողությունների վերսկսման կանխարգելմանը : Միաժամանակ անհրաժեշտ էր համարվել կողմերի ուղիղ շփումների մեխանիզմը՝ հնարավոր միջառեպերի կարգավորման համար, որը համաձայնեցվել էր 1995 թ. փետրվարի 6-ին[11]:

1995 թ. մայիսի 15-18-ին Մոսկվայում Ռուսաստանի արտգործնախարարությունում ավարտվեցին Լեռնային Ղարաբաղի հակամարտության դադարեցման քաղաքա-

ՄԵՐՐՈԴ ՄԱՀՏՈՅ ՀԱՍԱՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2019

Կան համաձայնագրի կնքմանը նվիրված բանակցությունները, որոնց մասնակցում էին Հայաստանի, Ադրբեյջանի և Լեռնային Ղարաբաղի, ինչպես նաև ԵԱՀԿ Մինսկի խորհրդաժողովի ռուս և ֆինն համանախազահների լիազոր ներկայացուցիչները: Բանակցությունների առաջին փուլը անցկացվել էր 1995 թ. փետրվարի 6-11-ը՝ Մոսկվայում և, փաստորեն, մտել փակուղի: Յիշնահարցը նորից Ադրբեյջանի կողմից Լեռնային Ղարաբաղի կարգավիճակի ծանաչման խնդիրն էր, չնայած որ Պրահայում հայտարարության ձևով ընդունվել էր մի որոշում, որտեղ համանախազահները հաստատել էին իրենց դիրքորոշումը, որն է՝ հակամարտության մեջ կա երեք կողմ՝ Ադրբեյջանը, Լեռնային Ղարաբաղը և Հայաստանը:

Մոսկովյան երօրյա բանակցությունների քննարկման հարցերն էին՝ քաղաքական համաձայնագրի տեքստը, ինչպ առանցքային հարցեր՝ Լեռնային Ղարաբաղի անվտանգության երաշխիքների խնդիրը, Լաշինի, Շուշիի, Լեռնային Ղարաբաղի քաղաքական կարգավիճակի, փախատականների՝ իրենց բնակավայրերը վերադառնալու հարցերը[12]:

Մոսկովյան երկրորդ հայտարարության մեջ Մինսկի խմբի պատվիրակությունները հայտարարել էին, որ ներգրավված բոլոր կողմերի համար նախկինի պես կարևոր է հաստուկ ուշադրություն դարձնել մարտական գործողությունների վերսկսման կամխարգելմանը և լիարժեք օգտագործել հակամարտության կողմերի միջև ուղղակի շփումների մեխանիզմը՝ հնարավոր միջադեպերի կարգավորման համար[13]:

Քննարկված հարցերի շրջանակով Սոսկովյան բանակցությունների ուսումնասիրությունը թույլ էր տալիս եզրակացնելու, որ միջնորդները փորձում էին առանցքային հարցերի շուրջ փախարարության ստեղծել որտեղ քննարկված հարցերը ածանցված էին Բուդապեշտյան և Պրահյան գործընթացներում հակամարտող կողմերի կարգավիճակի ծզգրտումից և կառուցողական գործելակերպ էին ենթադրում:

1995 թ. հունիսի 15-21-ը Յելսինկիում ԵԱՀԿ Մինսկի խմբի շրջանակներում տեղի ունեցած Լեռնային Ղարաբաղի հակամարտությանը նվիրված եռակողմ բանակցությունների հերթական փուլը նշանավորել էր որոշ առաջընթաց: Սցենարը նույն էր՝ սկզբում համանախազահների նախազահությանը հանդիպել էին հակամարտող կողմերը, այնուհետև Մինսկի խումբը լրիվ կազմով և վերջում իննյակը՝ առանց կոնֆլիկտի կողմերի:

Յելսինկյան հանդիպման ընթացքում առավել մանրամասն քննարկվել էին Ղարաբաղի կարգավիճակի և անվտանգության ապահովման խնդիրներ : Ընդ որում, եթե հայկական կողմը ընտրել էր մասնավորից ընդհանուրին գնալու ճանապարհ՝ պնդելով, որ Լեռնային Ղարաբաղի անվտանգությունը կնպաստի տարածաշրջանի անվտանգությանը, իսկ Ադրբեյջանի կողմից փորձ էր արվել այդ անվտանգությունը բխեցնել տարածաշրջանի անվտանգությունից:

Յանդիպման կարևոր և ելակետային հարցերից էին «Մինսկի խորհրդաժողովի արարողակարգի հարցերը», ինչը ԼՂՀ-ին հնարավորություն պետք է տար քաղաքական պայմանագրի ստորագրումից հետո հստակ գիտակցելու իր կարգավիճակը: Որպես դրական քայլ նշվել էր կարգավիճակի հարցի կարևորության գիտակցումը Ադրբեյջանի կողմից: ԼՂՀ արտգործնախարար Արկադի Ղուկասյանի խոսքերով. «Մենք աշխատում էինք երկու ուղղությամբ : Առաջինը քաղաքական մեջ համաձայնագրի տեքստն էր, իսկ երկրորդը՝ հանգուցային հարցերի առավել մանրակրկիտ քննարկումները, իսկ ադրբեյջանական կողմը՝ Շուշիի և Լաշինի հիմնախնդիրները: Յայաստանի պատվիրակությունը ոչ մի հարց առաջ չքաշեց, թենիւ ակտիվորեն մասնակցում էր բոլոր հարցերի քննարկմանը»: Ընդհանուր առնամը դրականորեն գնահատելով Յելսինկյան հանդիպմը՝ Արկադի Ղուկասյանը գտնում էր, որ հակամարտող կողմերի դիրքորոշումները հանգուցային հարցերում մնում են անփոփոխ: «Մենք նախկինի պես գտնում ենք, որ քաղաքական բոլոր հարցերը պետք է լուծվեն ոչ թե տարանջատված, այլ ընդհանուր

ՄԵԽՐՈԴ ՄԱՀՏՈՒՅ ՀԱՍԱԼԱՐՄԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2019

համատեքստում» [14]: Յելսինկի համդիպման ավարտին ընդունված հայտարարության մեջ կարևորվում էր հատկապես կողմերի պատրաստակամության անհրաժեշտությունը. «Մասնակիցները նշում են բանակցություններում համագործակցության միջնորդությունը եւ ընդգծում են առանց նախապայմանների զինված հակամարտության վերաբերյալ քաղաքական համաձայնագրի կնքման բացարկի կարևորությունը, հաստատակամության դրսևորումը եւ բանակցությունների կայունության և անշրջելիության ապահովումը» [15]:

Հատկանշական է, որ բանակցային խորհրդատվական գործընթացին գուգահեռ հուլիսի 14-15-ին կարճաժամկետ այցով Ստեփանակերտ էր ժամանել ԵԱՀԿ պաշտոնական պատվիրակությունը Մինսկի խորհրդաժողովի համանախագահներ Յելիշի Տալիստիկի և Վաղենտին Լոզինսկու գլխավորությամբ[16]: Այցելության նպատակն էր ԼՂՀ իշխանությունների ներկայացուցիչների հետ խորհրդակցություններ անցկացնել քաղաքային գործընթացի արագացման և քաղաքական համաձայնագրերի սկզբունքային հարցերում դիրքորոշումների հստակեցման շուրջ:

1995 թ. հուլիսի 24-27-ը Ավստրիայի Բադեն քաղաքում տեղի ունեցավ Եռակողմ / Լեռնային Ղարաբաղի, Յայաստանի և Աղրբեջանի / համդիպում ԵԱՀԿ Մինսկի խմբի հովանու ներքո: Օրակարգում զինված հակամարտության դադարեցման մասին համաձայնագրի / քաղաքական մեծ համաձայնագրի / մշակման և համաձայնցման/ արագացման հարցն էր՝ հաշվի առնելով կարգավորման առանցքային խնդիրների քննարկումը: Քննարկման հարթակում էին մարդասիրական բնույթի խնդիրները, մասնավորապես գերիների և պատաների ազատ արձակումն ու վերադարձը հայրենիք, անհայտ կորածների որոնումներին աջակցելը[17] : Ընդհանուր առնամբ հանդիպումն ուղղված էր հակամարտության հումանիտար հետևանքների վերացմանը: Բադենում կողմերին կոչ էր արվել ազատ արձակել երկու կողմերի պատանեներին և հավատարիմ մնալ 1994 հունիսի 25-ի ժմնում ստորագրված պատավորությամբ[18]: Աղրբեջանական պատվիրակության համար առաջնային հարցը Շուշիի և Լաշինի և դրանց հարող աղրբեջանական տարածքների ազատագրումն էր, որից հետո կարող էր քննարկել Լեռնային Ղարաբաղի կարգավիճակի խնդիրը[19]: Քատկանշական է, որ Աղրբեջանը Բադենին հաջորդող փուլում հերթական անգամ բարձրացրել ԵԱՀԿ Մինսկի խմբի կազմալուծման անհրաժեշտության փաստը[20]: 1995 թ. Բադենի հանդիպումը հերթական էր բանակցային գործընթացում քննարկված հարցերի շրջանակի ինչպես նաև ունեցած հետևանքների առումով:

1995 թ. սեպտեմբերի 4-12-ը Մուլվայում տեղի ունեցավ Եռակողմ հանդիպում / Լեռնային Ղարաբաղի, Յայաստանի և Աղրբեջանի / ԵԱՀԿ խորհրդաժողովի համանախագահության և հակամարտության կողմերի միջև: Ընթացակարգը և կողմերի մասնակցության ձևաչափը հետևյալն էր. սեպտեմբերի 4-9-ը՝ խորհրդատվություններ հակամարտող կողմերի մասնակցությամբ, սեպտեմբերի 11՝ ԵԱՀԿ Մինսկի խմբի խորհրդակցությունը ամրող կազմով, սեպտեմբերի 12՝ ԵԱՀԿ Մինսկի խմբի խորհրդատվությունները առանց կողմերի մասնակցությամբ:

Պատվիրակությունը դեկավարում էր ԼՂՀ արտաքին գործերի նախարար Արկադի Ղուկասյանը, պատվիրակության անդամներն էին Յուրի Բարսեղովը, Աշոտ Ղուլյանը, Արմեն Մելիք-Չահնազարյանը և ՅՇ-ում ԼՂՀ ներկայացուցիչ պաշտոնակատար Նաիրա Մելքոնյանը: Պետք է քննարկվեին քաղաքական մեծ համաձայնագրի հանգուցային կետերը: Կողմերի դիրքորոշումը հետևյալն էին [21]:

Աղրբեջանական կողմ.

Հեշտը դնում է վերահսկվող տարածքներից հատկապես Լաշինի շրջանից դարարայան գործերի դուրսերման վրա,

Խուսափում էր ԼՂՀ իրավական կարգավիճակի և սահմանների խնդրի քննարկումից,

չեր հստակեցնում, թե Աղրբեջանն իր հերթին գործերը դու՞րս է բերելու Չահումյա-

ՄԵԽՐՈԴ ՄԱՀՏՈՅ ՀԱՍԱԼԱՐՄԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2019

նի, Մարտակերտի, և Մարտունու շրջաններից[22],

խնդիրը տաճում էր դեպի տերմինարանական ծուղակ: Մասնավորապես առաջարկելով՝ «հակամարտության գոտի» հասկացությունը փոխարինել «հակամարտության տարածաշրջան» ձևակերպումով, ըստ որի հակամարտության մեջ են գտնվում Հայաստանն ու Աղբքեցանը, և ոչ թե Աղբքեցանն ու Ղարաբաղը:

Ուստի միջնորդի կողմից ԼՂ-ին Լաշինի միջանցքը վարձակալության տալու ժամկետի հարցում աղբքեցանական կողմը համաձայնել էր 1 տարի տևողությամբ Ղարաբաղին վարձակալության տալու հարցում:

Ղարաբաղյան կողմի դիրքորոշումը նշյալ հարցերի հարցում հետևյալն էր .

Ուստի միջնորդի կողմից ԼՂ-ին Լաշինի միջանցքը վարձակալության տալու ժամկետի հարցում Լեռնային Ղարաբաղը համաձայնել էր 99 տարի տևողությամբ իրականում այս հարցը քննարկվում էր առաջին անգամ և կարծիք կար, որ կարող էր քննարկվել նաև հետագայում:

Տերմինարանական ծուղակին ի պատասխան՝ ղարաբաղյան կողմն առաջարկում էր «հակամարտության տարածաշրջան» հասկացության տակ հասկանալ նաև թուրքիան, որը սպառազինություն էր մատակարարում Աղբքեցանին կամ Վրաստանը և պարբերաբար խափանում Հայաստան զնացող հաղորդակցությունները:

1995 թ. հոկտեմբերի 9-17-ը Մինսկի խմբի հովանու ներքո հերթական եռակողմանակցությունները տեղի ունեցան Ֆինլանդիայում[23]:

1995 թ. նոյեմբերի 22-դեկտեմբերի 1-ը Բոննում ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահության ներքո սկսվում են բանակցություններ և խորհրդատվություններ ԼՂԴ պատվիրակության մասնակցությամբ : ԼՂԴ կողմից մասնակցում էր ԱԳ նախարար Արկադի Ղուկասյանը, Յուրի Բարսեղովը և Սահմ Սայհյանը: ԼՂԴ պատվիրակության տեսակետները հիմնականում հետևյալն են. ԼՂԴ պատվիրակության կարծիքով՝ Համանախագահության փաստաթերում անբավարար մակարդակով էին արտացոլված Լեռնային Ղարաբաղի անվտանգության երաշխիքները:

Պատվիրակության կարծիքով, ղարաբաղյան ուժերի դրւու բերումը կնվազեցնի ԼՂԴ պաշտպանական հնարավորությունները: Անհրաժեշտ են միջազգային-իրավական փաստաթերեր ձևակերպել, որոնք կապահովեն Աղբքեցանի Հանրապետության պատասխանատվությունը ԼՂԴ անվտանգության հարցում: Առանց Լեռնային Ղարաբաղի կարգավիճակի հստակեցման՝ անհնար էր ապահովել տարածաշրջանի անվտանգությունը: Համաձայնության տեքստում անհրաժեշտ էր կետ ավելացնել այն մասին, որ մինչև կոնֆլիկտի վերջնական կարգավորումը գոյություն ունեցող դե-ֆակտո իրավիճակը չի կարող ուժով փոխվել, այլապես ԼՂԴ քայլեր կծեռնարկի անվտանգ գոյակության ապահովման համար :

ԼՂԴ պատվիրակությունը Լաշինը դիտարկում էր Լեռնային Ղարաբաղի անվտանգության համատեքստում : Պատրաստ է քննարկել Լաշինի հարցը, բայց միայն Մինսկի կոնֆերանսում Լեռնային Ղարաբաղի կարգավիճակի հստակեցումից հետո: ԼՂԴ չէր ընդունում Լաշինի կարգավիճակի տարրեր անվանումները, այդ թվում՝ «տրանզիտ գոտու»: Հնարավոր է համարում այն տարրերակը, որի դեպքում կճանաչի Աղբքեցանի սուվերենիտետը Լաշինի նկատմամբ, բայց իրավագործումը, գոտու նկատմամբ իշխանությունը/ պետք է մնար Լեռնային ղարաբաղյան կողմին: ԼՂԴ կողմն առաջարկում էր տրանզիտ գոտիների հնարավորությունը Քելբաջարի և Ղուբաթլի շրջաններով: Լաշինի հետ կապված ցանկացած դրշում, որը կարող է նախորդել Լեռնային Ղարաբաղի նոր կարգավիճակին, չէր կարող իրագործվել: Հարցերի մյուս խումբը վերաբերում էր հակամարտող կողմերի միջև առկա մարդասիրական բնույթի խնդիրներին[24]:

Բոննի բանակցություններում քննարկվել են ապագա համաձայնագրերի վճռորոշ կետեր, որոնց շուրջ անհրաժեշտ էր հասնել կողմերի փոխարժենանը: Բանակցությունների արդյունքում ընդունվել էր երկու փաստաթուղթ. ԵԱՀԿ արտաքին գործերի նախարարների խորհրդի՝ «Լեռնային Ղարաբաղի վերաբերյալ որոշման նախագիծ» և «Լեռ-

ՄԵԽՐՈԴ ՄԱՀՍՈՒՏ ՀԱՍԱՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2019

նային Ղարաբաղի հարցերով ԵԱՀԿ Մինսկի խորհրդաժողովի համանախագահների գեկուցումը»: Երկու փաստաթղթերն էլ պետք է ներկայացվեին դեկտեմբերի 7-ին Բուդապեշտում կայանալիք ԵԱՀԿ երկրների արտաքին գործերի նախարարների համդիպման քննարկմանը[25]:

Բոննում ԵԱՀԿ Մինսկի խմբի հերթական պայմանավորվածությունը ձեռք բերվեց Ղայաստանի և Ադրբեյջանի նախագահների խորհրդականներ ժիրայր Լիպարիտյանի և Վաֆա Գուլուզաղեանի միջև բանակցություններ սկսելու՝ Լեռնային Ղարաբաղի հնարավոր կարգավիճակի քաղաքական չափորոշիչները հստակեցնելու մասին: Ըստ Վարդան Օսկանյանի՝ «այդ օրերին հսկայական ճնշում կար համաձայնելու Լեռնային Ղարաբաղի՝ Ադրբեյջանի կազմում ամենաբարձր ինքնավարության առաջարկին, որը համազոր պետք է լիներ «դե ֆակտո անկախ, դե յուրէ Ադրբեյջանի կազմում» տարրերակին» [26]:

Բոննի բանակցություններում Ղարաբաղյան պատվիրակությունը կտրուկ առարկել է համանախագահների զեկույցի նախատեսատի որոշ հարցերին: Բոննում ԼՂՀ - պատվիրակությունը մերժել է Լաշինի միջանցքը Ղարաբաղին վարձակալության տալու մասին որոշումը: Իրենց հերթին համանախագահները գրիունակությամբ նշել էին, որ Ադրբեյջանը պատրաստակամություն է ցուցաբերել Լեռնային Ղարաբաղին բարձրագույն աստիճանի ինքնավարություն ապահովելու խնդրում[27]:

Բոննի բանակցություններին հաջորդած ԼՂՀ նախագահ Ռ. Քոչարյանի հարցագրույթում հատկանշվել էին բանակցությունների տրամաբանությունից բխող մի շարք շեշտադրումներ, մասնավորապես՝ Լեռնային Ղարաբաղն ինքնուրույնաբար ստեղծել է սեփական անվտանգության համակարգ՝ կազմված ռազմատեխնիկական, քաղաքական, աշխարհագրական բաղադրիչներից: Ռազմաճակատի գծի փոփոխությունը կարող է երեք անգամ երկարացնել պաշտպանության ենթակա գիծը: Բանակցությունների փակուլում հայտնվելու և ռազմական գործողությունների վերսկսման հնարավոր սենարները հաշվի առնելով՝ ԼՂՀ նախագահ Ռ. Քոչարյանի խոսքերով՝ «ԼՂՀ-ում ոչ ոք նման ինքնասպանության չի դիմ» [28]:

Ընդհանրապես խորհրդատվություններին հակամարտող կողմերի մասնակցության ծնազափով և քննարկված հարցերի շրջանակով Բոննի բանակցություններն առանձնանում էին: Լեռնային Ղարաբաղի պատվիրակության արմատական և սկզբունքային դիրքորոշումը մեծ ազեցություն ունեցավ հետագա բանակցություններում ԼՂՀ անվտանգությանը սպառնացող մի շարք հարցեր բանակցային խոսույթից դուրս մղելու առումով:

1995 թ. Բուդապեշտում դեկտեմբերի 7-8-ին ԵԱՀԿ Նախարարների խորհուրդը հաստատեց ղարաբաղյան խնդիրը Մինսկի խմբի շրջանակներում լուծելու հարցը: 1995 թ. դեկտեմբերի 8-ին ընդունված փաստաթուղթը ԵԱՀԿ Մինսկի գործընթացի մասին որոշում էր: Փաստաթղթի համաձայն՝ ԵԱՀԿ Մինսկի խմբի նախարարների խորհուրդը

հաստատում էր, որ ԵԱՀԿ Մինսկի գործընթացը համարվում է միակ ֆորումը Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման համար,

ողջունում էր հակամարտության կողմերի վճռականությունը հետևելու հրադադարի ռեժիմին, որը հաստատվել է 1994 մայիսի 12-ին,

կողմերին կոչ էր անում անհապաղ ազատել ռազմագերիներին և կոնֆլիկտի հետևանքով պատանդված անձանց և ապահովել Կիւմկի անարգել մուտքը ձերբակալման բոլոր վայրերը և այցելությունը ձերբակալվածներին,

միանում էր Մինսկի կոնֆերանսի համանախագահների ջանքերիմ՝ առանց հետագա ձգձգումների հասմելու Գործող նախագահի քաղաքական համաձայնությանը զիմված կոնֆլիկտի դադարեցման հարցում: Նման համաձայնությունը կվերացներ կոնֆլիկտի հիմնական հետևանքները բոլոր կողմերի համար և թույլ կտար կարծ ժամկետում հրավիրել Մինսկի կոնֆերանսը[29]:

ՄԵԽՐՈԴ ՄԱՀՏՈՅ ՀԱՍԱԼԱՐՄԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2019

Այսպիսով՝ 1995 թ. բանակցային գործընթացը և խորհրդատվությունները կոչված էին հակամարտության կարգավորման համապատասխան հարթակ ստեղծելու: Այլ հարց է, թե ինչպես էին առաջ քաշված առարկայական հարցերին մոտեցում ցուցաբերում հակամարտող կողմերը:

1994-1995 թթ. հրադադարի ռեժիմի հաստատումից հետո Լեռնային Ղարաբաղի Ղանրապետության դիրքորոշումը մասնավորապես ԵԱՀԿ Մինսկի խմբի և Ռուսաստանի այն ջանքերի օգտին, որոնք ուղղված են դարձարադա-ադրբեջանական դիմակայության գոտում հրադադարի ռեժիմի պահպանմանը,

Կարևորում էր խնդրի լուծման ոչ թե փուլային, այլ փաթեթային տարրերակը,

առաջնահերթում էր հաշտության բանակցություններում ռազմատեխնիկական հարցերի լուծումը՝ մասնավորապես՝ հակամարտ կողմերի միջև միջազգային տարանցատիչ ուժերի տեղաբաշխումը,

դիտարկում էր քաղաքական խնդիրները որպես փաթեթի երկրորդ հարց, ընդ որում տարածքների հարցը ևս քաղաքական խնդիրների հարթակում էր,

դեմ էր հակամարտության դիմակայության գոտում խաղաղարար ուժերի տեղակայման հարցում թուրքական կողմի ազդակներին՝ ապահովելու սեփական ներկայությունը միջազգային խաղաղարար ուժերում թուրքական գորախմբի ներկայությանը: ԼՂՀ նման դիրքորոշումը բացատրվում է նրանով, որ Թուրքիան՝ լինելով ԵԱՀԿ Մինսկի խմբի անդամներից մեկը, հիշյալ կազմակերպության մեջ պաշտպանում է հակամարտող կողմերից մեկի՝ Ադրբեջանի շահերը, որը որևէ կերպ չի համընկնում խաղաղարար միջնորդի դերի հետ,

բացառում և աճտրամարանական էր համարում քաղաքական համատեքստում շահարկվող ԼՂՀ-ն ազատագրված տարածքներ Լաշինի և Շուշիի հարցը՝ ընդգծելով դրանց ռազմավարական և կարևորագույն նշանակությունը Լեռնային Ղարաբաղի բնակչության անվտանգության և հայկական նորանկախ հանրապետության կենսական շահերի համար, այն դիտարկվում էր որպես ապաշրջափակման միակ ուղի և ԼՂՀ անխափան կապ արտաքին աշխարհի հետ,

պահանջում էր լուժում տալ Լեռնային Ղարաբաղի անվտանգության, կարգավիճակի, Ջուլսիսային Արցախից ու Ադրբեջանից տեղահանված հայ գաղթականների հարցերին,

պահանջում էր հիմք ընդունել ԵԱՀԿ փաստաթղթերը, որոնց համաձայն՝ հակամարտության կողմեր են համարվում նրանք, ովքեր ստորագրել են հրադադարի համաձայնագիրը, այսինքն, Լեռնային Ղարաբաղը, Ջայաստանը և Ադրբեջանը,

հակադարձում էր ադրբեջանական կողմի այն պնդմանը, որ ՀՀ գինված ուժերի կողմից են վերահսկվում տարածքները, շեշտվում էր այն հանգամանքը, որ ԼՂՀ գինված ուժերը 98 տոկոսով կազմավորված են հանրապետության քաղաքացիներից, իսկ գինծառայողների միայն 2 տոկոսը հայաստանարնակ արցախից կամավորներ են,

հայտարարում էր, որ ԼՂՀ գինված ուժերը չեն հեռանա ազատագրված տարածքներից, քանի ներ չի մշակվել քաղաքական լուժում: ԼՂՀ-ն նման լուժում է համարում Ադրբեջանի կողմից իր անկախության ճանաչումը:

Ադրբեջանական կողմի դիրքորոշում.

պնդում էր, որ առաջարկվող քաղաքական լուժումը չի կառուցվելու ստեղծված իրադրության վրա, այլ մինչև հակամարտությունը գոյություն ունեցած Երմիկական և տարածքային իրողությունների վրա,

կարող էր սկսել Լեռնային Ղարաբաղի կարգավիճակի քննարկման հարցը ռազմական գործողությունների հետևանքները վերացնելուց հետո,

գտնում էր, որ բանակցություններում Լեռնային Ղարաբաղի ադրբեջանական համայնքը նույնպես պետք է հաշվի առնվի և ունենա իր տեղը,

դիտարկում էր հակամարտության կարգավորման երկու փուլ՝ հրադադար, որը ենթադրում է հակամարտության բոլոր կողմերի մասնակցություն և քաղաքական փուլ,

ՄԵԽՐՈԴ ՄԱՀՏՈՅ ՀԱՍԱՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2019

որին պետք է մասնակցեն ինչպես հակամարտ, այնպես էլ բոլոր շահագրդին կողմերը, առանձնացնում էր հակամարտության մակարդակներ, մասնավորապես՝ հակամարտության արնատը համարվում է Յայաստանից դուրս մղված աղրբեջանական համայնքի խնդիրները. այն ներկայացվում է մարդու իրավունքների ուսոնահարման տեսակետից՝ ներկայացնելով որպես Աղրբեջանի կառավարության և Լեռնային Ղարաբաղի հայ բնակչության միջև և Լեռնային Ղարաբաղի հայ բնակչության և աղրբեջանական փոքրամասնության միջև հակամարտություն: Ստեղծված իրավիճակում չեղ ընկալում և միջազգային իրավունքի խախտում էր համարում Աղրբեջանի տարածքի մի մասի կարգավիճակի հստակեցնան պահանջը, որը, գտնվելով այլ պետության ռազմական վերահսկողության տակ, մոտ էր իր անկախությանը,

շարունակում էր պնդել, որ Յայաստանը հակամարտության կողմ է, ուստի ստորագրողներ պետք է ճանաչվեն կամ Յայաստանն ու Աղրբեջանը, կամ էլ Յայաստանը, Աղրբեջանը, և Ղարաբաղի հայկական ու աղրբեջանական համայնքները: ԼՂՀ կողմից հակաֆաստարկը տվյալ դեպքում այն էր, որ որպես այդպիսին կարող են հանդես գալ ԼՂ ուստական, հունական, ուկրաինական և ազգային այլ փոքրամասնությունների ներկայացուցիչները, ինչպես նաև Բաքվի, Գյանջայի և Սուլմանյի և Աղրբեջանի մյուս վայրերից տեղահանված հայության պատվիրակությունները:

Այսպիսով՝ 1995 թ. բանակցային գործընթացում ու համոդապումներում ԼՂՀ հանդես էր գալիս որպես հակամարտող կողմ: Աղրբեջանական կողմի քայլերն ուղղված էին ԼՂՀ՝ որպես հակամարտող կողմի նշանակության նվազեցմանը և դրսնորվում էին բանակցային գործընթացում առավելապաշտական, ոչ իրատեսական դիրքորոշմամբ: Յատկանշական է, 1994 թ. ռազմական գործողությունների ակտիվ փուլն ամփոփած հրադադարին հաջորդած ժամանակաշրջանը բնորոշվում էր որպես «բանակցություններ՝ բանակցությունների համար»: Գործընթացն արդյունավետ էր այն իմաստով, որ քննարկումների ընթացքում դուրս էին մղվում ժամանակի բննությանը չղիճացող տեսակետները կամ առաջարկները: Յատկանշական է նաև, որ նշված գործընթացներին գնահատական պետք է տալ ժամանակի մեջ, ըստ այդմ՝ այն գնահատելով որպես հակամարտության դիվանագիտության պատմության ամենավծռորոշ փուլերից մեկը: Արխիվային նյութերի, ժամանակի մամուլի և ժամանակակիցների հուշագրությունները փաստում են, որ գործընթացը բույլատրելիության աստիճան բաց էր հասարակության համար: Բանակցությունների /խորհրդատվությունների/ և հանդիպումների/ ընթացքում ԼՂՀ որպես հակամարտող կողմ ուներ հստակ ընդգծված սկզբունքային դիրքորոշում: Յատկանշական է, որ այս դիրքորոշումը Արցախի Յանրապետությունը շարունակում է պահպանել մինչև մեր օրերը, որի համար ունի բոլոր իրավաքաղաքական իիմքերը և որոնք որևէ փաստաթղթով չեն չեղարկվել:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Յակոբյան Թ., Կանաչ ու սև: Արցախյան օրագիր, Երևան, 2011, էջ 265-266:
2. Կազմիրով Վ., Մир Կարախյ. Պոսредничество России в урегулировании нагорно-карабахского конфликта, Москва, 2015, стр. 361-363.
3. Ղարաբաղյան հակամարտության արտաքին քաղաքական ասպեկտները, Վերլուծական նյութեր, թող. 3, Երևան, 2009, էջ 218:
4. Աղաջանյան Վ., Ղարաբաղյն բավարարում է այսօրվա ստատուս քվոն, Ազգ, 31 հունվար, 1995 թ.:
5. ԼՂՀ, ԱԳՆ արխիվ, թող. 78, գ. 34, 35:
6. Ազգ, 13 հունվար, 1995 թ.:
7. Կազմիրով Վ., նշվ. աշխ., էջ 365:
8. Ազգ, 22 փետրվար, 1995 թ.:

ՄԵՐՐՈԴ ՄԱՀՏՈՅ ՀԱՍԱՍԱՐԱՆԻ ԽՈՏՏՈՒ 2019

9. ՀՀ ԱԳՆ արխիվ, պաշտոնական փաստաթղթեր և որոշումներ, h. 1, Chairman's summary first Meeting of the OSCE Senior Council, Prague, 31 March, 1995.
10. ՕԲՏԵ, руководящий совет, Прага. 1-SC/Journal No. 2, 31 марта 1995 года, Приложение. <http://vn.kazimirov.ru/doc13.htm>
11. ՀՀ ԱԳՆ արխիվ, պաշտոնական փաստաթղթեր և որոշումներ, h. 1, Stokholm statement, 7 April, 1995. OSCE Minsk Group evaluates situation in Nagorno-Karabakh conflict, 7 April 1995 /<https://www.osce.org/mg/52549/>
12. Ազգ, 19 մայիս, 1995 թ.:
13. ՀՀ ԱԳՆ արխիվ, պաշտոնական փաստաթղթեր և որոշումներ, h. 1, Moscow statement-II, 19 May, 1995.
14. Ազգ, 27 հունիս, 1995 թ.:
15. ՀՀ ԱԳՆ արխիվ, պաշտոնական փաստաթղթեր և որոշումներ, h. 1, Helsinki statement, 21 June, 1995.
16. Ազգ, 15 հուլիս, 1995 թ.:
17. ԼՂՀ, 5 սեպտեմբեր, 1995 թ.:
18. ՀՀ ԱԳՆ արխիվ, պաշտոնական փաստաթղթեր և որոշումներ, h. 1, Baden statement, 28 July, 1995.
19. ԼՂՀ, 2 օգոստոս, 1995 թ. :
20. ԼՂՀ, 10 օգոստոս, 1995 թ.:
21. ԼՂՀ, 23 նոյեմբեր, 1995 թ.:
22. Բացի դրանից, եթե կար ՄԱԿ-ի բանաձև հայկական ուժերի գրադեցրած տարածքներից դուրս բերելու մասին, ապա չկա բանաձև Մարտակերտի կամ Շահումյանի մասին:
23. Մանասյան Ալ., Կարաբահսкий конфликт: ключевые понятия и хроника, Ереван, 2005, стр. 149.
24. ԼՂՀ ԱԳՆ արխիվ, թղթ. 22, գ. 1, թ. 1-10:
25. Ազգ, 7 դեկտեմբեր, 1995 թ.:
26. Օսկանյան Վ., Անկախության ճանապարհով, Երևան, 2013թ., էջ 169:
27. Ազգ, 30 նոյեմբեր, 1995 թ.:
28. Որբերտ Քոչարյան. «Ղարաբաղը չի դիմի ինքնասպան քայլերի», Ազգ, 6 դեկտեմբերի, 1995 թ.:
29. Барсегов Ю., Нагорный Карабах в международном праве и мировой политике. Документы и комментарий, Т.1, Москва, 2008, стр. 752-753.

ԱՄՓՈՓԱԳԻՐ

ԼՂՀ «ազատագրված տարածքների» և «կարգավիճակի» քննույթը ադրբեջանադարաբաղյան հակամարտության կարգավորման բանակցային գործընթացում /1995թ./

ՆԵԼԻ Բաղդասարյան

1992-1994 թթ. ԵԱՀԽ Մինսկի գործընթացին հաջորդեց նոր փոլ, 1995 թ. հունվարին ձևավորվեց ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահությունը: Շարունակում էր պահպանվել բանակցային գործընթացի 1994 թ. Բուդապեշտի գագաթնաժողովում հաստատված Եռակողմ ձևաչափը /Լեռնային Ղարաբաղ, Ադրբեջան և Հայաստան/: 1995 թ. բանակցային գործընթացում ու հանդիպումներում ԼՂՀ հանդես էր գալիս որպես հակամարտող կողմ: Ադրբեջանական կողմի քայլերն ուղղված էին ԼՂՀ՝ որպես հակամարտող կողմի նշանակության նվազեցմանը և դրսևովում էին բանակցային գործընթացում առավելապաշտական, ոչ իրատեսական դիրքորոշմամբ: Գործընթացն արդյունավետ էր այն իմաստով, որ

ՄԵՄՐՈՊ ՄԱՀԾՆԵՑ ՀԱՍԱՍԱՐԱՆԻ ՂՈՎԱՐ 2019

քննարկումների ընթացքում դուրս էին մղվում ժամանակի քննությանը չղիմացող տեսակետները կամ առաջարկները: Բանակցությունների /խորհրդատվությունների/ և հանդիպումների/ ընթացքում ԼՂՀ որպես հակամարտող կողմ ուներ հստակ ընդգծված սկզբունքային դիրքորոշում: Յատկանշական է, որ այս դիրքորոշումը Արցախի Յանրապետությունը շարունակում է պահպանել մինչև ներ օրերը, որի համար ունի բոլոր իրավաքաղաքական հիմքերը և որոնք որևէ փաստաթղթով չեն չեղարկվել:

РЕЗЮМЕ

Дискурс «освобожденных территорий» и «статуса» НКР в переговорном процессе по урегулированию азербайджано-карабахского конфликта /1995г./

Нелли Багдасарян

Ключевые слова: Нагорный Карабах, НКР, освобожденные территории, статус, трехсторонние договоренности, конфликтующая сторона, Шуши, Лачинский коридор, Армения, Азербайджан, азербайджано-карабахский конфликт, переговорный процесс.

В 1992–1994 гг. за Минским процессом ОБСЕ последовал новый этап. В январе 1995 г. было сформировано сопредседательство Минской группы ОБСЕ. 1994 г. на Будапештском саммите был утвержден Трехсторонний формат переговорного процесса (Нагорный Карабах, Азербайджан и Армения). Действия азербайджанской стороны были направлены на уменьшение значения НКР как противоборствующей стороны и проявлялись в форме максималистической, нереалистичной позиции в переговорном процессе. Процесс был эффективен в том смысле, что в ходе обсуждений вытекали не выдерживающие времени точки зрения или предложения. В ходе переговоров /консультаций и встреч/ НКР, как противоборствующая сторона, имела четко выраженную принципиальную позицию. Примечательно, что этой позиции Республика Арцах продолжает придерживаться до наших дней, для чего имеет все политico-правовые основы, которые не были аннулированы каким-либо документом.

SUMMARY

The Discourse of the NKR “Liberated Territories” and “Status” in the Negotiation Process of the Azerbaijani-Karabakh Conflict Settlement /1995/

Nelly Baghdassaryan

Keywords: Nagorno Karabakh, NKR, liberated territories, status, trilateral agreements, conflicting party, Shushi, Lachin corridor, Armenia, Azerbaijan, Azerbaijan-Karabakh conflict, negotiation process.

The 1992-94 CSCE Minsk process was followed by a new stage; 1995 marked the beginning of this new phase with the formation of the OSCE Minsk Group Co-Chairmanship. The tripartite format of negotiations /Nagorno Karabakh, Azerbaijan, Armenia/ as fixed in the 1994 Budapest Summit final document remained on the table. In 1995 the Nagorno Karabakh took part in the negotiation process as well as in the meetings as party to the conflict. The Azerbaijani moves were aimed at mitigating the role of the NKR as party to the conflict which reflected in the Azerbaijani maximalist, unrealistic stance in the negotiation process. The process was efficient in that the views or suggestions which had not stood the test of time were pushed during the discussions. The NKR as party to the conflict had a clear-cut principled stance in the negotiations/consultations and meetings/. It is noteworthy that the Artsakh Republic, having solid legal and political ground, remains committed to these positions up until nowadays, and the latter were not abolished by any document.